

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի հուլիսի 17-ի N 406-Ա հրամանի

III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՏՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Հսկիչ կետի առաջատար մասնագետը, Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ, մասնակցում է Հսկիչ կետի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

**Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն
Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱԳԱՐԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿԻՉ ԿԵՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ -ՏԵՍՈՒՉԻ**

(ԾԱԾԿԱԳԻՐ՝ 30/1-4.1-38)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Ագարակի սահմանային հսկիչ կետի (այսուհետ՝ Հսկիչ կետ) առաջատար մասնագետ-տեսուչի (այսուհետ՝ առաջատար մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում:

2. Հսկիչ կետի առաջատար մասնագետին «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի ղեկավարը:

**II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԵԿՎԱՐՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3. Հսկիչ կետի առաջատար մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Հսկիչ կետի պետին:

4. Հսկիչ կետի առաջատար մասնագետ իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Հսկիչ կետի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Հսկիչ կետի պետը կամ Հսկիչ կետի գլխավոր մասնագետ-տեսուչներից մեկը կամ Հսկիչ կետի առաջատար մասնագետներից մեկը:

Հսկիչ կետի առաջատար մասնագետը Հսկիչ կետի պետի, Կետի գլխավոր մասնագետ-տեսուչներից մեկի, առաջատար մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:

6. Հսկիչ կետի առաջատար մասնագետը՝

1) Հսկիչ կետի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի:

2) կատարում է Հսկիչ կետի պետի հանձնարարականները:

3) պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

IV. ԾՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Հսկիչ կետի առաջատար մասնագետը՝

1) Հսկիչ կետի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում:

2) Աշխատակազմի ներսում Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների ղեկավարների և աշխատողների հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում:

3) Աշխատակազմից դուրս շփվում է Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ:

4) Աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս լիազորություններ չունի:

**V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻԱՆՑ
ՍԵՂՇԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ**

9. Հսկիչ կետի առաջատար մասնագետը, Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ մասնակցում է Հսկիչ կետի առջև դրված գործառնություններից բխող բարդ խնդիրների վերլուծմանը և գնահատմանը:

Հսկիչ կետի առաջատար մասնագետը Հսկիչ կետի առջև դրված գործառնություններից բխող բարդ խնդիրների բացահայտման, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Հսկիչ կետի առաջատար մասնագետը՝

1) ունի Գյուղատնտեսական հումքի վերամշակման և պարենամթերքների տեխնոլոգիա կամ Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ Անասնաբուծություն կամ Անասնաբուծություն կամ Անասնաբուծական-սանիտարական փորձաքննություն կամ Քիմիա կամ Մանրէաբանություն (միկրոբիոլոգիա) կամ Բժշկականխարգելման գործ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

2) ունի ՀՀ Սահմանադրության, Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուծության մասին», «Կերի մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1316-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, 2004 թվականի հուլիսի 24-ի N 1032-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1888-Ն և N 1915-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1730-Ն, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի

«Անասնաբուժության, բուսասանիտարիայի ու կերի անվտանգության բնագավառներում վերահսկողություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող լիազոր մարմնի իրավասությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը վերապահելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 557-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի փետրվարի 9-ի N 62 ու օգոստոսի 24-ի N 512 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1731-Ն, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը լիազորություններ վերապահելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1913-Ն, N 1916-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 576-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի N 103-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1732-Ն որոշումների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2).

6) տիրապետում է ռուսերենին (ազատ):

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Հսկիչ կետի առաջատար մասնագետը՝

1) մասնակցում է անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման գործընթացների նկատմամբ վերահսկողությանը, մասնավորապես՝ անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի տրամադրման, սնուշառման, փաստաթղթային և ֆիզիկական ստուգազնման՝ կենդանիների զննում, տեղափոխման (փոխադրման) պայմանների և ռեժիմի համապատասխանություն և այլն, ինչպես նաև իրականացված հսկողական միջոցառումների հիման վրա համապատասխան որոշումների ընդունման, տարանցիկ փոխադրման թույլտվության տրամադրման աշխատանքներին.

2) մասնակցում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման գործընթացների նկատմամբ, անվտանգություն հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի տրամադրման, դրոշմակնքման, կարգադրագրերի կազմման, փաստաթղթային ստուգման, զննման և (կամ) նմուշառման, տարանցիկ փոխադրման թույլտվության տրամադրման աշխատանքներին.

3) Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ մասնակցում է Ծառայության կողմից վարվող էլեկտրոնային տեղեկատվական բազաների վարման աշխատանքներին.

4) Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ իրականացնում է Հսկիչ կետի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

5) Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ մասնակցում է Հսկիչ կետի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

6) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Հսկիչ կետի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

7) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ]

Հսկիչ կետի առաջատար մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

VIII. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍԻՃԱՆԸ

12. Հսկիչ կետի առաջատար մասնագետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

ՑԱՆԿ N 1

ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆ ԶՔԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ)
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Թիմային աշխատանք
2. Հաղորդակցություն
3. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
4. Միջանձնային հարաբերություններ
5. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
6. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱԳԱՐԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿԻՉ ԿԵՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՏԵՍՈՒՉԻ ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ
ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ ՔԵՌՂ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ինդիքների լուծում
2. Մտածողության ոճեր
3. Բանակցությունների հմտություններ
4. Ելույթների հմտություններ